10.04.25 - 10.04.25
12:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետ, 201 լսարան

Ս.թ. ապրիլի 10-ին՝ ժամը 12:30-ին, Կենսաբանության ֆակուլտետի 201 լսարանում ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ տեղի կունենա «BostonGene» կենսատեխնոլոգիական ընկերության «Մոլեկուլային և ճշգրիտ ուռուցքաբանություն» կրթական ծրագրի մեկնարկին նվիրված տեղեկատվական հանդիպում։

Կրթական ծրագիրը նախատեսված է Կենսաբանության ֆակուլտետի և Ֆարմացիայի ինստիտուտի բարձր կուրսերի ուսանողների և շրջանավարտների համար։ Դասախոսությունները կվարեն «BostonGene» ընկերության ճշգրիտ ուռուցքաբանության բաժանմունքի առաջատար մասնագետները։

Կրթական ծրագրի շրջանակում կքննարկվեն՝

- մոլեկուլային և բջջային կենսաբանության այն թեմաները, որոնք այսօր լայնորեն կիրառվում են բժշկության ոլորտում,
- ժամանակակից անհատականացված ուռուցքաբանության ոլորտում գրանցված հաջողությունները,
- ոլորտի հեռանկարային և զարգացող ուղղությունները,
- անհատականացված ուռուցքաբանական տվյալների բազաները, տեղեկատվական աղբյուրները, չափանիշները և ավելին։

Կրթական ծրագիրը բարեհաջող ավարտելու պարագայում ուսանողները կստանան իրենց հետագա կարիերան ընկերությունում կառուցելու հնարավորություն։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am